

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
ԱԱՀ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Հայաստանի Հանրապետության ԱԱՀ-ի մասին օրենքի համաձայն ԱԱՀ-ի դրույքաչափը կազմում է 20%¹, ինչի շնորհիվ 2013 թ. ՀՀ-ում պետբյուջե է փոխանցվել 396,693.7 մլն. դրամ²: Այս հարկատեսակը կազմում է ՀՀ պետական եկամուտների 39.69%-ը, իսկ շահութահարկը և եկամտային հարկերը 12.47% և 25.12%² համապատասխանաբար: ԱԱՀ-ի նման տոկոսը զարգացած տնտեսությամբ երկրների համեմատությամբ բարձր ցուցանիշ է և մատնանշում է տնտեսության անառողջ վիճակ: Զարգացած տնտեսության ցուցանիշներից է, որ հարկերի միջոցով ձևավորված պետական եկամուտները գերակշռորեն բաղկացած լինեն ուղղակի հարկերից՝ եկամտային հարկից և մասնավորապես շահութահարկից:

Սույն հոդվածի նպատակն է գնահատել ՀՀ-ում ավելացված արժեքի հարկի դրույքաչափի (այսուհետ՝ ԱԱՀ) նվազեցման մակրոտնտեսական ազդեցությունը և այդ մեթոդաբանության դիտարկումը որպես օգտակար գործիք այլ հարկատեսակների դրույքաչափերի փոփոխության արդյունքների գնահատման համար:

Հարկերի դրույքաչափի նվազեցման անմիջական արդյունքը այն է, որ ցանկացած նվազեցում կրերի պետական եկամուտների ուղղակի նվազեցման: Սակայն հենց այն գումարը, որն ազատվում է նվազեցման արդյունքում՝ հայտնվում է սպառողների մոտ, որոնք իրենց հերթին այն ծախսում են և վերստին ներդնում տնտեսության մեջ, որն իր հերթին առաջացնում է նոր հարկեր: Այս մակրոտնտեսական երևույթների գնահատման համար դիտարկվել են հետևյալ ազդեցությունները՝

- Ուղղակի արդյունք՝ առաջարկվող ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցման արդյունքում նվազած պետական եկամուտները:
- Բեյնսի գործակցի արդյունք՝ առաջարկվող ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցման արդյունքում ստացված գումարի շրջանառության արդյունքից գոյացած գումարի սպառումից (հաշվի առնելով ՀՀ-ում սահմանային սպառման հակումը) առաջացած պետական եկամուտները հարկերի տեսակով:

Բեյնսի գործակցի արդյունքի հաշվարկի համար դիտարկվել է հարկերից ազատված գումարը, ՀՀ-ում սահմանային սպառման հակումը և դրա արդյունքում ստացված գումարի ազդեցությունը ԱԱՀ-ի փոփոխված դրույքաչափով:

ՀՀ-ում սահմանային սպառման գնահատման համար դիտարկվել են ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայության աղքատության վերաբերյալ ուսումնասիրությունները, մասնավորապես «Տնային տնտեսությունների եկամուտներ, ծախսեր և բազային սնունդի սպառում» ուսումնասիրությունը³: Վերլուծության արդյունքում ստացվում է, որ 2012թ. միջին սպառման հակումը ՀՀ-ում կազմում է 89-90%, սակայն նույն հաշվետվության վերլուծության արդյունքում ստացվում է, որ սահմանային սպառման հակումը կազմում է 47.91%: Նման տարբերությունը վիճակագրական տվյալների մեջ է այն որ նման ուսումնասիրություններ չեն կատարվել 2012թ.-ից ի վեր, բավարար հիմք է հանդիսացել կատարելու առանձին ուսումնասիրություն ներկա սահմանային սպառման հակումը ճշգրտելու նպատակով:

¹ ՀՀ Ազգային ժողով, ՀՀ Օրենք Ավելացված Արժեքի Հարկի Մասին ՀՕ-118, Բաժին 3՝ Հարկի Դրույքաչափեր, Հոդված 9:

² ՀՀ ԿԱ ՊԵԿ (2013թ.), 2013 թվականի դեկտեմբեր ամսվա ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ աղյուսակը և գրաֆիկական պատկերները
http://www.taxservice.am/Shared/Documents/ TI/Tax_Statistics/Tax_Statistical_Data/vt_hhpek_ekamut_2013_jan_dec.xls

³ ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն (2013թ.), Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատություն, Մաս 2. Տնային տնտեսությունների եկամուտներ, ծախսեր, և բազային սնունդի սպառումը, էջ 91,92:
http://armstat.am/file/article/poverty_2013e_3.pdf

Սահմանային սպառման հակումը ցույց է տալիս թե ինչպես կտնօրինի քաղաքացին ստացված հավելյալ գումարը: Այլ կերպ ասած իր ստացած հավելյալ 1 դրամի որ մասը կծախսի խնայելու փոխարեն: Իր հերթին սահմանային սպառման հակումը մատնանշում է թե տնտեսության մեջ գումարի ավելացումը ինչպես կծախսվի և յուրաքանչյուր հավելյալ ծախսումի որ մասը նորից կծախսվի և այդպես շարունակ: Տնտեսության մեջ գումարի նման ավելացման չափը գնահատվում է Քեյնսի գործակցի միջոցով:

Սահմանային սպառման հակման ուսումնասիրության հարցումը կատարվել է 2014թ. մայիսի 19-ից մինչև հունիսի 7-ը: Հարցմանը մասնակցել է 100 անձ, որոնք հիմնականում ֆինանսական ծառայությունների, հեռահաղորդակցության, SS (IT), ոչ պետական և պետական ծառայության աշխատակիցներ են: Հարցման հիմնական կետերն են եղել՝

1. Ինչքա՞ն է կազմում Ձեր ընտանեկան (տնային տնտեսության) միջին ամսական եկամուտը:
2. Հավելյալ 5% եկամուտ ունենալու պարագայում քանի՞ տոկոսը կծախսեիք: Օր.՝ 100,000 դրամ եկամուտ ունենալու պարագայում հավելյալ 5,000 դրամ-ի ո՞ր մասը կծախսեք խնայելու փոխարեն:

Ուսումնասիրության հիմնական ենթադրությունը եղել է հետևյալը՝

- Եթե մասնակիցների միջին տնային տնտեսության ամսական եկամուտը գերազանցում է ՀՀ-ում միջին ամսական եկամուտը, ապա միջին սահմանային սպառման հակումը կլինի առնվազն այնքան, որքան հարցման միջինացված արդյունքը և ավելին:
- Հավելյալ 5%-ի հարցի արդյունքը կիրառելի է 5%-ից ավելի փոքր հավելյալ եկամուտներ դիտարկելիս, որոնց պարագայում սահմանային սպառման հակումը նույնը կլինի կամ ավելին:

Ուսումնասիրության արդյունքում ստացվել է, որ մասնակիցների կշռված միջինով սահմանային սպառման հակումը կազմում է մոտ 80%: Ըստ ՀՀ ԱՎԾ-ի, ներկայում ՀՀ-ում միջին ամսական եկամուտների 98%-ը 260,000-ից¹ ցածր են, հետևաբար վերաբաշխելով ուսումնասիրության արդյունքներն ըստ ՀՀ եկամուտների կշիռների, ՀՀ-ում սահմանային սպառման հակումը կազմում է մոտ 87.6%: Ստացված արդյունքը ավելի համահունչ է ներկա միջին սպառման հակումին, քան հասանելի վիճակագրական տվյալները:

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքները ամփոփելով հնարավոր է հաշվել սահմանային սպառման հակումից ստացվող Քեյնսյան գործակիցը:

Քեյնսյան գործակցի բանաձևն է՝

$$\text{Քեյնսի գործակից} = \frac{1}{1 - \text{սահմանային սպառման հակում}}$$

Վերոնշյալ բանաձևի արդյունքում ստացվում է, որ Քեյնսյան գործակիցը կազմում է 8.07: Այսինքն՝ ՀՀ տնտեսության մեջ ազատված ցանկացած գումար, որն ուղղված է սպառմանը կրերի իր 8.07-ապատիկը:

Քանի որ ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցումը կրերի սպառմանն ուղղված գումարների ազատման, ապա դրանք կազդեն ՀՀ տնտեսության վրա վերոնշյալ գործակիցը հաշվի առնելով:

Պարզության համար, այս հոդվածի շրջանակներում ընդունվել է ուսումնասիրության արդյունքում ստացված միջին սահմանային սպառման արդյունքը, այլ ոչ թե հնարավոր ավելի հակումը:

Քանի որ սպառման ձևավորման գործընթացում ամեն սպառված դրամի դիմաց գանձվում է շահութահարկ, ապա շահութահարկի դրույքաչափը ավելանում է պետական եկամուտների հավելված ԱԱՀ-ից բացի: ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցման արդյունքում ստացված հավելյալ գումարը ավելանում է ընկերությունների վաճառքին: ՀՀ ընկերությունների վաճառքի մոտ 3.86%² վերածվում է շահութահարկի:

¹ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (2013թ.), Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատություն, Մաս 1. Աղքատության պատկերը և աշխատանքային շուկայի զարգացումները Հայաստանում 2008-2012թթ., էջ 106: http://armstat.am/file/article/poverty_2013a_2.pdf

² ՀՀ ԱՎԾ (2011թ.), Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, Մաս Բ, էջ 22. http://www.armstat.am/file/article/finansner_10_3-4.pdf

Բացի այդ դիտարկվել են 4 սցենար՝ ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցում՝ 1%, 3%, 5%, 10%, տնտեսության զարգացման զգայունության հաշվարկման համար: Նման հաշվարկը ցույց կտա թե, ԱԱՀ-ի դրույքաչափի որքան նվազեցումը կբերի տնտեսական աճի, և որքանից հետո այլևս կհանգեցնի վնասի:

Վերլուծության արդյունքները բերված են ստորև՝

Աղյուսակ 1

ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցում

Արդյունքի տեսակ	մլն ՀՀ դրամ			
	-1%	-3%	-5%	-10%
Ուղղակի արդյունք	-3,966.94	-11,900.81	-19,834.69	-39,669.37
Քեյնսի գործակցի արդյունք	6,348.91	17,666.44	27,063.58	41,467.31
Զուտ արդյունք	2,381.97	5,765.63	7,228.89	1,797.94


Կարելի է նկատել որ ԱԱՀ-ի դրույքաչափի նույնիսկ 1% նվազեցումը արդեն կբերի դրական արդյունքների: Այս երևույթը բացատրելի է մասնավորապես ՀՀ-ում բարձր սպառման գործակցով, քանի որ եկամուտների մեծ մասը սպառվում է: Այդ սպառումների մեծ մասը կրկին սպառվում է և դրանով իսկ դրական արդյունք ունենում տնտեսության վրա:

Վերը բերված աղյուսակից կարելի է եզրակացնել, որ սցենարներից առավելագույնի՝ 10% ԱԱՀ-ի նվազեցման դեպքում զուտ արդյունքը կտրուկ նվազում է, որը բացատրելի Լաֆֆերի կորի շնորհիվ: Ըստ Լաֆֆերի, պետական եկամուտները աճում են հարկերի դրույքաչափի աճին զուգընթաց մինչ որոշակի դրույքաչափ, որից հետո դրույքաչափի ավելացումը աշխատում է ի վնաս պետական եկամուտների:

Ստորև բերված է Լաֆֆերի կորի ձևափոխված տարբերակը, որը ներկայացնում է այս հոդվածի արդյունքը՝

Գծապատկեր 1

ԱԱՀ-ի առավել արդյունավետ կետը Լաֆֆերի կորի վրա



Ներկայացված ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ ներկա պահին ՀՀ-ում ԱԱՀ-ի դրույքաչափը չի գտնվում իր ամենաարդյունավետ կետում: ԱԱՀ-ի նվազեցումը 5%-ով, այսինքն՝ հասցնելով դրույքաչափը 15%-ի ԱԱՀ-ից ստացված պետական եկամուտները կլինեն ավելի մեծ, քան ներկայում կիրառվող դրույքաչափի դեպքում:

Այս վերլուծության արդյունքից ելնելով, տվյալ մեթոդաբանությունը հավանաբար կարելի է կիրառել այլ հարկատեսակների նկատմամբ կախված տեղեկատվության հասանելիությունից:

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
ԱԱՀ ԴՐՈՒՅՔԱԶԱԹԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԴԵՊԶՈՒՄ

ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Զոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
ասպիրանտ

Համառոտագիր

Սույն հոդվածի նպատակն է ցուցադրել, որ ՀՀ հարկաբյուջետային քաղաքականությունում փոփոխությունը, մասնավորապես ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցումը, կարող է դրական ազդեցությունը ունենալ պետական եկամուտների և ընդհանուր տնտեսության վրա: Դրական արդյունքի հիմնական դրդապատճառն է ՀՀ-ում սահմանային սպառման հակման բարձր մակարդակը: ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցումը 5%-ով կհանգեցնի ԱԱՀ-ի գծով ՀՀ պետական եկամուտների առավելագույն աճի:

Քանադի քառեր. ԱԱՀ դրույքաչափ, սահմանային սպառման հակում, Քեյնսի գործակից, պետական եկամուտ, հարկի դրույքաչափի նվազեցում:

ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Զոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի
ասպիրանտ

Համառոտագիր

Սույն հոդվածի նպատակն է ցուցադրել, որ ՀՀ հարկաբյուջետային քաղաքականությունում փոփոխությունը, մասնավորապես ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցումը, կարող է դրական ազդեցությունը ունենալ պետական եկամուտների և ընդհանուր տնտեսության վրա: Դրական արդյունքի հիմնական դրդապատճառն է ՀՀ-ում սահմանային սպառման հակման բարձր մակարդակը: ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցումը 5%-ով կհանգեցնի ԱԱՀ-ի գծով ՀՀ պետական եկամուտների առավելագույն աճի:

Քանադի քառեր: ԱԱՀ դրույքաչափ, սահմանային սպառման հակում, Քեյնսի գործակից, պետական եկամուտ, հարկի դրույքաչափի նվազեցում:

ANALYSIS OF SENSITIVITY OF THE ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA TO THE REDUCTION OF VAT RATE

ARAM TER-GHEVONDYAN

Ph.D. Student

M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences

Republic of Armenia

Abstract

The article attempts to illustrate that changes in the fiscal policy in the Republic of Armenia, namely, the reduction of VAT rate, could positively affect the state revenues and the overall economy. The main driver of the positive effect is the high value of marginal propensity to consume in the Republic of Armenia. The reduction of VAT rate by 5 percentage points could cause the highest increase in VAT collected in state revenues of the Republic of Armenia.

Keywords: VAT rate, marginal propensity to consume, Keynesian multiplier, state revenue, tax rate reduction.